

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 217-Ա

27 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1833-Ա, N 1838-Ա, N 1861-Ա, N 1864-Ա, 2020 թվականի հուլիսի 15-ի N 1870-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 22-ին, 23-ին և 25-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Աիդա Համբարյան Հրանտի» Ա/Ձ՝ Արթիկ համայնք, Բաղրամյան 14/3.
- 2) «Թորոս Պալոյան Միհրանի» Ա/Ձ՝ Արթիկ համայնք, Բաղրամյան 16ա.
- 3) «Արմավիրի բարեկարգում տնօրինություն» ՀՈԱԿ՝ ք. Արմավիր, Սայաթ-Նովա 109Ա.
- 4) «Արմենուհի Սարիբեկյան» Ա/Ձ՝ ք. Ապարան, Բաղրամյան 59.
- 5) «Լենա Մազմանյան Մելսիկի» Ա/Ձ՝ Իջևան համայնք, Աբովյան 49.
- 6) «Գագիկ Գրիգորյան Ալբերտի» Ա/Ձ՝ Իջևան համայնք, Աբովյան 47.
- 7) «Առաքելյան Արարատ» Ա/Ձ՝ Իջևան համայնք, Երիտասարդական փողոց.
- 8) «Կառլեն Դավթյան Բագրատի» Ա/Ձ՝ Իջևան համայնք, Երիտասարդական փողոց 58.
- 9) «Նելլի Քոքոբեկյան» Ա/Ձ՝ Գետահովիտ համայնք, 29-րդ փողոց 1.
- 10) «Պետրոս Պետրոսյան» Ա/Ձ՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 117/4.
- 11) «Դավիթ Գրիգորյան» Ա/Ձ՝ ք. Իջևան, Անկախության 7/20.
- 12) «Հակոբ Ամյան» Ա/Ձ՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 91-3.

13) «Հակոբյան Պայքար» Ա/Ձ՝ ք. Իջևան, Անկախության 25/34.

14) «Մորայլ Սենթր Արթ» ՍՊԸ՝ ք. Դիլիջան, Մ. Գորկի 48-4:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 27/07/20 18:00:00 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ